

ՍԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2015

ԶԻՍԴ

ԹԵՍ 8

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՝ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանքի պահանջը և պատասխանների առաջարկվող տարրերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ճնարուղը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանար պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ճնարուղում: Պատասխանների ճնարուղի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Ցանկանում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 Ո՞ր համակարգի բաղադրիչները կարելի է բաժանել թորման եղանակով.

- ա) շաքարի և կերակրի աղի ջրային լուծույթի
 - բ) ամոնիումի նիտրիտի ջրային լուծույթի
 - գ) ացետոնի ջրային լուծույթի
 - դ) ացետոնի սպիրտային լուծույթի
 - ե) քացախաթթվի ջրային լուծույթի
 - զ) նավթի
- 1) բ, զ, դ, ե
 - 2) ա, բ, ե, զ
 - 3) զ, դ, ե, զ
 - 4) ա, բ, զ, դ

2 Որքա՞ն է պղնձի(II) նիտրատի ջերմային քայլայման ռեակցիայի պինդ արգասիքի մոլեկուլում դրական և բացասական օքսիդացման աստիճան ունեցող տարրերի զանգվածների հարաբերությունը համապատասխանաբար.

- 1) 4 : 1
- 2) 7 : 16
- 3) 16 : 7
- 4) 1 : 4

3 Ո՞րն է հետևյալ արտահայտության ձիշտ շարունակությունը.

Կովալենտային կապի երկարությունը $HF - HCl - HBr - HI$ մոլեկուլներում ձախից աջ _____:


- 1) մեծանում է
- 2) չի փոխվում
- 3) մեծանում է, ապա փոքրանում
- 4) փոքրանում է

4 Որքա՞ն է ատոմային օրբիտալների ընդհանուր թիվը չորրորդ էներգիական մակարդակի d ենթամակարդակում.

- 1) 16
- 2) 7
- 3) 5
- 4) 10


5

Ո՞ր ռեակցիաներն են իրականացվել հետևյալ փոխարկումների շղթայում՝ ըստ հերթականության.



- 1) տեղակալման, միացման, փոխանակման, միացման
- 2) միացման, քայքայման, քայքայման, փոխանակման
- 3) քայքայման, միացման, միացման, փոխանակման
- 4) քայքայման, միացման, փոխանակման, քայքայման

(6-7) Տրված են դարձելի ռեակցիաների հավասարումներ.



6

Ո՞ր դեպքերում ճնշման իջեցումը հավասարակշռության տեղաշարժ չի առաջացնի.

- 1) գ, դ
- 2) ա, բ, զ
- 3) գ, է, զ
- 4) ա, բ

7

Ո՞ր դեպքերում ջերմաստիճանը բարձրացնելիս հավասարակշռությունը կտեղաշարժվի դեպի վերջանյութերի առաջացման կողմը.

- 1) ա, դ
- 2) բ, զ
- 3) է, զ
- 4) բ, զ

8

Որքա՞ն է հիդրօքսիդ իոնների մոլային կոնցենտրացիան (մոլ/լ), եթե 800 մլ լուծույթը պարունակում է 0,2-ական մոլ NaOH , LiOH , Ba(OH)_2 (ալկալիները լրիվ են ոլոցված).

- 1) 0,8
- 2) 0,6
- 3) 0,4
- 4) 1,0

9

Ո՞րքան է վերականգնիչ նյութի քանակը (մոլ) ըստ հետևյալ վերօքս ռեակցիայի հավասարման.



- 1) 2,5
- 2) 3
- 3) 6
- 4) 0,5

10

Վերակրի աղի ջրային լուծույթի մեջ ընկրմել են յուրաքանչյուրն *a* գրամ զանգվածով իներտ էլեկտրոդներ և լուծույթը ենթարկել էլեկտրոլիզի: Որոշ ժամանակ անց իներտ կաթոդը հանել են, լվացել, չորացրել և նորից կշռել, որից հետո զանգվածը կազմել է *b* գրամ: Ի՞նչ փոխհարաբերության մեջ են *a*-ն և *b*-ն.

- 1) $a > b$
- 2) $a - b < 0$
- 3) $a >> b$
- 4) $a = b$

11

Ո՞ր շարքում են տարրերի ատոմային շառավիղները նախ փոքրանում, ապա մեծանում.

- 1) F, Cl, Br
- 2) Br, I, Cl
- 3) Cl, F, Br
- 4) Cl, Br, F

12

Հավասար ծավալներով ազոտի և թթվածնի խառնուրդին ո՞ր գազը պետք է ավելացնել նույն խտությամբ նոր գազային խառնուրդ ստանալու համար.


- 1) NH_3
- 2) C_2H_6
- 3) SO_2
- 4) H_2

13

Սովորական պայմաններում ո՞ր շարքի բոլոր նյութերն ունեն ատոմային կառուցվածք.

- 1) ազոտ, մեթան, ածխածնի(IV) օքսիդ
- 2) գրաֆիտ, սիլիան, ֆոսֆորի(V) օքսիդ
- 3) կարբոռունդ, ալմաստ, սիլիցիումի(IV) օքսիդ
- 4) պլաստիկ ծծումբ, ամոնիակ, օգոն

(14-15) Տրված է փոխարկումների հետևյալ շղթան.



14

Որո՞նք են փոխարկումների տրված շղթյում X_1 և X_2 նյութերը.

- 1) HCl և Fe
- 2) HCl և KCl
- 3) Cl₂ և KCl
- 4) Cl₂ և Fe

15

Ի՞նչ զանգվածով (գ) FeCl_2 կստացվի 22,4 գ երկարից՝ ըստ տրված փոխարկումների շղթայի.

- 1) 50,8
- 2) 72,6
- 3) 127
- 4) 44,45

16

Ո՞ր զույգ նյութերի լուծույթները կարելի է տարբերել ֆենոլֆտալեինով.

- 1) NaHSO_4 և HCl
- 2) $\text{Ca}(\text{OH})_2$ և NaOH
- 3) NH_4Cl և HNO_3
- 4) KOH և NH_4Cl

17

Պղնձի և ալյումինի փոշիների որոշակի զանգվածով խառնուրդին ավելացրել են a գ աղարթու։ Որոշ ժամանակ անց՝ նստվածքը հեռացնելուց հետո, լուծույթի զանգվածը կազմել է b գ։ Ինչպես են փոխարարելովում այդ զանգվածները.

- 1) $b > a$
- 2) $a > b$
- 3) $a >> b$
- 4) $a = b$

18

Նիկել և ցինկ մետաղների զույգը թթվի հետ հպվելիս ո՞ր երևույթն է ընթանում.

- 1) ցինկը վերականգնվում է
- 2) անջատվում է թթվածին
- 3) ցինկը լուծվում է
- 4) նիկելը լուծվում է

19

Ո՞ր էլեկտրոնային բանաձևն է համապատասխանում R_2O_7 բաղադրությամբ բարձրագույն օքսիդ առաջացնող տարրին.

- 1) $[Ne]3s^23p^5$
- 2) $[Ar]3d^64s^2$
- 3) $[Ar]3d^34s^2$
- 4) $[He]2s^22p^5$

20

Նատրիումի քլորիդի լուծույթն անզույն է, իսկ նատրիումի երկքրոմատինը՝ նարնջագույն։ Ո՞ր մասնիկներով է պայմանավորված նատրիումի երկքրոմատի լուծույթի գույնը.

- 1) CrO_4^{2-}
- 2) H_3O^+
- 3) Cr^{3+}
- 4) $Cr_2O_7^{2-}$

(21-22) Շիկացրել են նատրիումի և ամոնիումի նիտրատների հավասարամոլային խտությունը։

21

Որքա՞ն է շիկացումից ստացված չոր գազային խառնուրդի հարաբերական խտությունն ըստ հելիումի.

- 1) 10
- 2) 20
- 3) 4
- 4) 5

22

Ի՞նչ գանգվածով (q) նշված աղերի հավասարամոլային խառնուրդ է քայքայվել, եթե շիկացնելիս նրա գանգվածը պակասել է 31,2 գրամով.

- 1) 32
- 2) 34
- 3) 53,625
- 4) 28,375

23

Համապատասխանեցրե՛ք ռեակցիաների ուրվագրերի ձախ և աջ մասերը.

| <i>Ձախ մաս</i> | <i>Աջ մաս</i> |
|---|---|
| ա) $\text{SiO}_2 + \text{Mg}_{(\text{ավելցուկ})} \rightarrow$ | 1) $\text{MgO} + \text{Si}$ |
| բ) $\text{SiO}_2 + \text{Na}_2\text{CO}_3 \rightarrow$ | 2) $\text{MgO} + \text{Mg}_2\text{Si}$ |
| զ) $\text{SiO}_2 + \text{HF} \rightarrow$ | 3) $\text{SiF}_4 + \text{H}_2\text{O}$ 4) $\text{Na}_2\text{SiO}_3 + \text{CO}_2$ 5) $\text{SiH}_4 + \text{OF}_2$ 6) $\text{Na}_2\text{SiO}_3 + \text{CO}$ |

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճշշտ.

- 1) ա2, բ6, զ5
- 2) ա2, բ4, զ3
- 3) ա2, բ4, զ5
- 4) ա1, բ6, զ3

24

Ո՞ր ռեակցիայում է ծծմբի(IV) օքսիդը ցուցաբերում օքսիդիչ հատկություն.

- 1) $\text{SO}_2 + 2\text{NaOH} = \text{Na}_2\text{SO}_3 + \text{H}_2\text{O}$
- 2) $\text{SO}_2 + 2\text{H}_2\text{S} = 3\text{S} + 2\text{H}_2\text{O}$
- 3) $\text{SO}_2 + \text{H}_2\text{O} = \text{H}_2\text{SO}_3$
- 4) $\text{SO}_2 + 2\text{H}_2\text{O} + \text{Cl}_2 = \text{H}_2\text{SO}_4 + 2\text{HCl}$

25

Ո՞ր շարքում են օքսիդները դասավորված թթվային հատկությունների աճման կարգով.

- 1) $\text{Sb}_2\text{O}_3, \text{As}_2\text{O}_3, \text{P}_2\text{O}_3, \text{N}_2\text{O}_5, \text{N}_2\text{O}_3$
- 2) $\text{N}_2\text{O}_5, \text{N}_2\text{O}_3, \text{P}_2\text{O}_3, \text{As}_2\text{O}_3, \text{Sb}_2\text{O}_3,$
- 3) $\text{Sb}_2\text{O}_3, \text{As}_2\text{O}_3, \text{P}_2\text{O}_3, \text{N}_2\text{O}_3, \text{N}_2\text{O}_5$
- 4) $\text{N}_2\text{O}_3, \text{N}_2\text{O}_5, \text{P}_2\text{O}_3, \text{As}_2\text{O}_3, \text{Sb}_2\text{O}_3$

26

Եթե ռեակցիայի արագությունն արտահայտվում է $V = kc$ հավասարումով, ապա ո՞ր կլինի k -ի չափման միավորը.

- 1) l/l
- 2) l^{-1}
- 3) l
- 4) mnl/l

27

Որո՞նք են բաց թողած բառերը.

Քիմիական ռեակցիայի ջերմությունը հավասար է _____ գոյացման
ջերմությունների գումարի և _____ գոյացման ջերմությունների
գումարի տարրերությանը՝ քանակաչափական գործակիցները հաշվի առնելով.

- 1) հեղուկների, զագերի
- 2) վերջանյութերի, ելանյութերի
- 3) ելանյութերի, վերջանյութերի
- 4) զագերի, հեղուկների

28

1մոլ քանակությամբ ո՞ր նյութի դիտումից են առաջանում առավել քիչ
քանակությամբ PO_4^{3-} իոններ.

- 1) Na_2HPO_4
- 2) Na_3PO_4
- 3) H_3PO_4
- 4) NaH_2PO_4

29

Ո՞ր նյութերի փոխազդեցությանն է համապատասխանում $\text{H}^+ + \text{OH}^- = \text{H}_2\text{O}$ կրծատ
իոնային հավասարումը.

- 1) CaH_2 և H_2O
- 2) $\text{Ni}(\text{OH})_2$ և H_2SO_4
- 3) RbOH և HCl
- 4) $\text{Fe}(\text{OH})_3$ և H_2SO_4


30

Ո՞ր թթուն տաքացնելիս համապատասխան անհիդրիդ չի առաջանում.

- 1) H_2CO_3
- 2) H_2SiO_3
- 3) HNO_3
- 4) H_2SO_3

31

Ո՞նք է հետևյալ քանածեով դեղամիջոցի անվանումը.



- 1) ասպիրին
- 2) աղբենալին
- 3) կատալազ
- 4) վիտամին C

(32-33) Ալկանի լրիկ այրման համար պահանջվել է դրանից 8 անգամ ավելի մեծ ծավալով թթվածին.

32 Որքա՞ն է ալկանի մոլեկուլում բոլոր ատոմների գումարային թիվը.

- 1) 17
- 2) 20
- 3) 23
- 4) 14


33 Որքա՞ն է առաջնային ածխածինների ատոմների թիվը բոլոր իզոմեր ալկանների մոլեկուլներում.

- 1) 7
- 2) 9
- 3) 8
- 4) 6

34 Հետևյալ միացություններից ո՞րն է 1 : 1 մոլային հարաբերությամբ $\text{CH}_2 = \text{CH} - \text{CH} = \text{CH}_2$ և Br_2 նյութերի փոխազդեցության հիմնական արգասիքը.

- 1) 1,2-երկբրոմբութան
- 2) 1,4-երկբրոմբութան
- 3) 1,4-երկբրոմբութեն-2
- 4) 3,4-երկբրոմբութեն-1

35 Փոխարկումների հետևյալ շղթայում ո՞րը կարող է լինել X նյութը.



- 1) քսիլոլ
- 2) քլորբենզոլ
- 3) նիտրօբենզոլ
- 4) տոլուոլ

36 Էթիլացետատի և անիայտ օրգանական միացության մեկական մոլ խառնուրդի

լրիվ հիդրոլիզի համար պահանջվել է 20 % զանգվածային բաժնով կալիումի հիդրօքսիդի 280 գ լուծույթ: Ո՞րն է անհայտ օրգանական միացության անվանումը.

- 1) գլիցերինի եռօլեատ
- 2) տողուոլ
- 3) քացախաթթվի անհիդրիդ
- 4) մեթիլացետատ


37

Ո՞ր հատկանիշներն են հաստատում ֆենոլի մոլեկուլում քենցոլային օղակի ազդեցությունը ($-OH$) ֆունկցիոնալ խմբի հատկությունների վրա.

- ա) ֆենոլային ($-OH$) խմբի ջրածինը դառնում է առավել շարժունակ քան ($-OH$) խմբի ջրածնի ատոմը՝ միատում սպիրուլում
 - բ) էլեկտրոնային խտությունը բենզոլային օղակի 2,4,6 դիրքերում մեծանում է
 - գ) ֆենոլը, ի տարբերություն միատում սպիրուլում է ալկալիների նուր լուծույթների հետ
 - դ) ֆենոլը, ի տարբերություն բենզոլի, փոխազդում է բրոմազրի հետ
- 1) ա, գ, դ
 - 2) բ, զ
 - 3) ա, զ
 - 4) ա, բ, զ, դ

38

Համապատասխանեցրե՛ք ռեակցիայի հավասարումը, ընթացող ռեակցիայի անվանումը և օրգանական արգասիքի անվանումը.

| Հավասարում | Ռեակցիայի անվանում | Արգասիքի անվանում |
|--|----------------------------|------------------------|
| ա) $C_6H_{12}O_6 \rightarrow 2CH_3-CH(OH)-COOH$ | 1) Էսթերացում | Ա) α -հիդրօքսի- |
| բ) $\left[C_6H_7O_2 \begin{array}{c} OH \\ \\ OH \end{array} \right]_n \xrightarrow[3nH_2O]{3nHNO_3} \left[C_6H_7O_2 \begin{array}{c} ONO_2 \\ \\ ONO_2 \end{array} \right]_n$ | 2) հիդրոլիզ | պրոպինաթթու |
| զ) $\text{օսլա} \xrightarrow{H^+, H_2O}$  | 3) Փոտոսինթեզ | Բ) գլուկոնաթթու |
| դ) $\alpha-C_6H_{12}O_6 + H_2 \xrightarrow{Ni} C_6H_{14}O_6$ | 4) հիդրում | Գ) սորբիտ |
| | 5) սպիրտային խմորում | Դ) պիրօքսիլին |
| | 6) կաթնաթթվային խմորում | Ե) մալթոզ |
| | | Զ) կոլօքսիլին |

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճշտ:

- 1) ա6Ա, բ2Զ, զ4Բ, դ1Ե
- 2) ա5Բ, բ1Դ, զ3Ե, դ4Ա
- 3) ա6Ա, բ1Դ, զ2Ե, դ4Գ
- 4) ա6Բ, բ1Զ, զ2Գ, դ2Ա

39 Ո՞ր ամինաթթուն է ստացվում քլորեթանաթթուն ամոնիակի հետ փոխազդելիս.

- 1) ալանին
- 2) լիզին
- 3)օրնիտին
- 4) գլիցին

40 Որքա՞ն է 50400 գ/մոլ միջին մոլային զանգվածով պոլիէթիլենի պոլիմերացման միջին աստիճանը.

- 1) 28
- 2) 1800
- 3) 50400
- 4) 6

41 Որոշակի ջերմաստիճանում աղի լուծելիությունը 14,5 գ է 100 գ ջրում:Ի՞նչ զանգվածով (գ) հազեցած լուծույթ կստացվի տվյալ ջերմաստիճանում 58 գ աղից:

42 Ի՞նչ զանգվածով (տոննա) 4 % ածխածին պարունակող երկարի համաձույվածք (քուշ) կստացվի 464 տ զանգվածով մազնիսական երկարաքարից:

43 Մալթող երկսահսարիդի լրիվ հիդրոլիզից գոյացած վերջանյութի սպիրտային խմորումից ստացված սպիրտից Լեբեդի եղանակով 67, 2 լ (ն.պ.) դիվինիլ է սինթեզվել: Ի՞նչ զանգվածով (գ) մալթող է հիդրոլիզվել:

44

224 զ չհանգած կիրը լուծել են ջրում և ստացված սուսպենզիայի մեջ բաց թողել այնքան ածխածնի(IV) օքսիդ, որ համակարգում գործնականում լուծված նյութ չմնա: Ի՞նչ զանգվածով (գ) ածխածնի(IV) օքսիդ են բաց թողել այդ սուսպենզիայի միջով:

45

Հաստատե՛ք կամ հերքե՛ք պնդումների ճշմարտացիությունը մեթանի հնարավոր բանաձևերի վերաբերյալ.

- 1) $^{14}\text{C}^2\text{H}_4$ մոլեկուլի զանգվածը 22 գ.ա.մ. է:
- 2) $^{13}\text{C}^1\text{H}_4$ -ի $6,02 \cdot 10^{23}$ թվով մոլեկուլների զանգվածը 17 գրամ է:
- 3) $^{14}\text{C}^1\text{H}_4$ -ի մոլեկուլի կառուցվածքը գծային է:
- 4) $^{12}\text{C}^1\text{H}_4$ մոլեկուլում ջրածին և ածխածին տարրերի զանգվածային հարաբերությունը 1 : 3 է:
- 5) $^{13}\text{C}^2\text{H}_4$ մոլեկուլում պրոտոնների թիվը հավասար է նեյտրոնների թվին:
- 6) $^{12}\text{C}^2\text{H}_4$ մոլեկուլում ջրածնի ատոմների մոլային բաժինը 40 % է:

Բ մակարդակ

46

Հնգավալենտ տարրի օքսիդի և բրոմիդի մոլային զանգվածների հարաբերությունը 1:3,035 է: Որքա՞ն է պրոտոնների թիվն այդ տարրի ատոմի միջուկում:

47

Ազոտի(II) և (IV) օքսիդների 1 լ ծավալով խառնուրդին ավելացրել են 3 լ թթվածին: Ռեակցիայի հետևանքով գազերի ընդհանուր ծավալը կրճատվել է 1,5 %-ով: Ընդունելով, որ գազերի ծավալները չափված են նույն պայմաններում, հաշվե՛ք ազոտի(II) օքսիդի ծավալային բաժինը (%) սկզբնական խառնուրդում:

48

Օքտոֆոսփորական թթվի ջրային լուծույթում հայտնաբերվել են 0,7904 գ հիդրօքսոնիում իոններ: Այդ լուծույթի լրիվ չեղոքացման վրա ծախսվել է 33,6 գ կալիումի հիդրօքսիդ: Որքա՞ն է թթվի երկրորդ փուլի դիտցման աստիճանը (%), եթե առաջին փուլն ընթացել է 20 %-ով, իսկ երրորդ փուլով թթուն գործնականորեն չի դիտցվել:

49

H-Cl կապի էներգիան 431 կՋ/մոլ է, իսկ H-H և Cl-Cl կապերինը՝ համապատասխանաբար 436 կՋ/մոլ և 242 կՋ/մոլ: Ի՞նչ քանակով ջերմություն (կՋ) կանչատվի պարզ նյութերից 1 մոլ քլորաջրածին գոյանալիս:

(50-51) Ամենաթերև մետաղի որոշակի զանգվածով նմուշը լուծել էն 468 գ ջրում և ստացել 10 % զանգվածային բաժնով ալկալու լուծույթ:

50 Որքա՞ն է լուծված մետաղի զանգվածը (գ):

51 Որքա՞ն է ստացված լուծույթի զանգվածը (գ):

(52-53) Հազեցած միահիմն կարբոնաթթվի կալիումական աղի և ավելցուկով վերցրած կալիումի հիդրօքսիդի 203 գ խառնուրդը միահալել էն: Ստացված պինդ մնացորդին ավելացրել էն 120 գ սիլիցիումի(IV) օքսիդ և կրկին միահալել, որի հետևանքով անջատվել է 11,2 լ (ն. պ.) զագ: Պինդ զանգվածը ջրում լուծելիս մնացել է 30 գ չլուծվող նյութ:

52 Որքա՞ն է կարբոնաթթվի կալիումական աղի մոլային զանգվածը (գ/մոլ):

53 Որքա՞ն է առաջին ռեակցիայի ժամանակ անջատված օրգանական նյութի զանգվածը (գ):

- (54-55) Մետաղի (II) սուլֆատի 332,8 գ լուծույթի մեջ ընկդմել են ցինկի թիթեղ, որոշ ժամանակ անց թիթեղը հանել են, չորացրել և կշռել: Պարզվել է, ուշակցիայի ընթացքում ծախսվել է 43 գ մետաղի (II) սուլֆատ, իսկ թիթեղի զանգվածն ավելացել է 10,8 գրամով:

54

Որքա՞ն է երկվալենտ մետաղի հարաբերական ատոմային զանգվածը:

55

Որքա՞ն է նոր ստացված աղի զանգվածային բաժինը (%) լուծույթում:

- (56-57) Կալիումի հիդրոկարբոնատի և կալցիումի կարբոնատի որոշակի զանգվածով խառնուրդին անհրաժեշտ քանակով աղաթքու ավելացնելիս ստացվել է A լուծույթը և անջատվել է զագ: Գազը 16 գ նատրիումի հիդրօքսիդ պարունակող լուծույթի մեջ անցկացնելիս ստացվել է միայն նատրիումի կարբոնատ պարունակող B լուծույթը: A և B լուծույթները խառնելիս անջատվել է 5 գ նստվածք:

56

Որքա՞ն է ելային խառնուրդի զանգվածը (գ):

57

Որքա՞ն է կալիում իոնների գումարային քանակը (մմոլ) A լուծույթում:

- (58-60) Ֆենոլի, քացախաթթվի և պրոպենաթթվի 1,045 գ խառնուրդը քանակապես փոխազդել է 6 % զանգվածային բաժնով նատրիումի հիդրօքսիդի 10 գ լուծույթի հետ: Ստացված լուծույթը գոլորշացրել են, այնդ մնացորդը՝ չորացրել: Հայտնի է, որ ելային խառնուրդը կարող է զունազրկել 2 % զանգվածային բաժնով 100 գ բրոմաջուրը:

58

Որքա՞ն է քացախաթթվի զանգվածը (մգ) խառնուրդում:

59

Քանի՞ անգամ է պրոպենաթթվի նյութաքանակը խառնուրդում գերազանցում ֆենոլի նյութաքանակը:

60

Որքա՞ն է պինդ մնացորդի զանգվածը (մգ):

(61-63) 8 % զանգվածային բաժնով պղնձի (II) սուլֆատի 200 գ լուծույթին ավելացրել են որոշակի զանգվածով պղնձարջասապ և ստացել աղի 1,8 անգամ ավելի մեծ քանակ պարունակող նոր լուծույթ: Վերջինս իներտ էլեկտրոդներով ենթարկել են էլեկտրոլիզի, իսկ էլեկտրոլիզը դադարեցնելուց հետո մնացած լուծույթին ավելացրել են ավելցուկով վերցրած նատրիումի հիդրօքսիդի լուծույթ: Գոյացել է նստվածք, որն առանձնացրել են և պարզել, որ մինչև հաստատուն զանգված շիկացնելիս նրա զանգվածը պակասում է 0,72 գրամով:

61

Որքա՞ն է սկզբնական լուծույթին ավելացրած պղնձարջասապի զանգվածը (q):

62

Որքա՞ն է անողի վրա անջատված զազի ծավալը (մլ, ն.պ.):

63

Որքա՞ն է նստվածքի առանձնացումից հետո մնացած լուծույթում աղի քանակը (մմոլ):

- (64-66) Կալիումի, նատրիումի և պղնձի նիտրատների 13,81 գ խառնուրդը, որում նատրիումի ասումների թիվը 4 անգամ մեծ է կալիումի ասումների թվից, շիկացրել են մինչև հաստատուն զանգված: Ստացված զազային խառնուրդը ջրի միջով անցկացնելիս զազային խառնուրդի ծավալը կրճատվել է 6 անգամ և ստացվել է 3 % զանգվածային բաժնով ազոտական թթվի լուծույթ:

64

Որքա՞ն է պղնձի նիտրատի մոլային բաժինը (%) սկզբնական խառնուրդում:

65

Որքա՞ն է 3 % զանգվածային բաժնով ազոտական թթվի լուծույթի զանգվածը (գ):

66

Ի՞նչ ծավալով (մլ, ն.պ.) NO_2 պետք է ավելացնել զազային խառնուրդին՝ այն ամբողջությամբ ազոտական թթվի փոխարկելու համար:

(67-69) 102 գ զանգվածով 1: Յ ծավալային հարաբերությամբ ազոտաջրածնային խառնուրդն անցկացրել են տաք կատաղիզատորի վրայով, որի հետևանքով զազային խառնուրդի խտությունն ըստ ջրածնի փոխվել է 0,75-ով:

67

Որքա՞ն է ազոտի փոխարկման աստիճանը (%):

68

Որքա՞ն է ամոնիակի զանգվածային բաժինը (%) ստացված զազային խառնուրդում:

69

Ստացված զազային խառնուրդն անցկացրել են օրթոֆոսֆորական թթվի 2,4 մոլ/լ կոնցենտրացիայով 500 մլ լուծույթի ($\rho=1,3188 \text{ g/cm}^3$) միջով: Որքա՞ն է փոքր մոլեկուլային զանգվածով աղի զանգվածային բաժինը (%) լուծույթում:

70

Մեկ լիտր ծավալով փակ անոթում $2\text{SO}_{2(\text{q})} + \text{O}_{2(\text{q})} \rightleftharpoons 2\text{SO}_{3(\text{q})}$ ռեակցիայի ընթացքում հավասարակշռություն ստեղծվելու պահին ծախսվել է թթվածնի 20 %-ը: Ելանյութերի սկզբնական կոնցենտրացիաներն են՝ $\text{CSO}_2 = 1,32\text{մոլ/l}$, $\text{CO}_2 = 0,8 \text{ мոլ/l}$: Հաստատե՛ք կամ հերքե՛ք պնդումների ճշմարտացիությունը խնդրի վերաբերյալ:

- 1) Համակարգում թթվածնի հավասարակշռային կոնցենտրացիան $[\text{O}_2] = 0,1\text{մոլ/l}$ է:
- 2) SO_3 -ի հավասարակշռային կոնցենտրացիան $[\text{SO}_3] = 0,64\text{մոլ/l}$ է :
- 3) Ըստ ռեակցիայի պայմանի՝ հավասարակշռության հաստատունի թվային արժեքը $0,16$ է:
- 4) Հավասարակշռության պահին փոխազդել է $0,16 \text{ мոլ}$ թթվածին:
- 5) Ըստ ռեակցիայի հավասարման՝ առաջացել է $0,32 \text{ мոլ}$ SO_3 :
- 6) Եթե համակարգում ստեղծվել է հավասարակշռություն, ծախսվել է $0,68 \text{ мոլ}$ SO_2 :